

տօնարանին զաներէցն՝ Տիփիլիսի եղաւ զաներէց Երեսփոխանաց ժողովոյ: — Երրակազմ պաշտօնարանն ի սկզբան ի զուր ձգնեցաւ մեծամասնութիւն մը գտնել իրեն կողմն, մինչեւ որ յանկարծական ոճիր մ'ի գլուխ հանեց զայն: Երեսփոխանաց ժողովոյ նստի ժամանակ անհշիւտական մը պայթուցիկ ումը մը յաջողեցաւ նետել, որով բազմաթիւ երեսփոխանք վիրաւորուեցան: Բարեբախտաբար մեռնող չեղաւ, եւ զաներիցուն աշարքութիւններ թէ ժողովը չընդհատեցան եւ թէ ներկայից դուրս գերծանիլն արգիւտեցաւ, որով նաեւ չարագործին ճերբակալուամ յաջողեցաւ:

Այս դիպաց վրայ անհշիւտականաց վրայ աւելի մտադրութիւն սկսան ընել տէրութիւնը: Գաղղիա խստացուց իւր օրէնքները եւ շատ մ'օտար անհշիւտականներ արտաքսեց: Սպանիա ալ մեծ մտադրութիւն ունի այս մասին, մանաւանդ քիչ ժամանակ յառաջ Պարչելոնայի մէկ թատրոնի մէջ ումըի արծակամը բազմաթիւ անծինք սպանուեցան, եւ աւելի յառաջ ի Սանթամարտէր ումըի մաքսաննգութեան պատճառաւ շատ մեծ դժբախտութիւն մը պատահած էր, նոյն նստին օդ ելլելովն եւ բոլոր քաղաքին ահագին վնաս պատճառելով երկաշարժէ մը շատ աւելի, վնաս էր իբր հազար անծինք մեռան: Առաջարկուեցաւ այս խընդրոյ վրայ դնսպանաժողով մը գումարել, բայց արդինք չունեցաւ տակաւին:

Աւստրիոյ խորհրդանոցն երկար եւ չեմք՝ բանակոհներ ունեցաւ Փրակի վրայ վարչութեան քացառիկ վիճակ հրատարակելուն առթիւ: Այս տրամադրութեան առիթ տուած էին Փրակի մէջ պատահած այլեւայլ դէպքեր, զորոնք վարչութիւնը ծանր կը համարէր, իսկ հակառակորդը ոչ, եւ կը պնդէին թէ խնդիրն ըստ ինքեան Բոնիմացուց ձգանց վրայ էր՝ իրենց տէրութեան իրական եւ ոչ միայն անուանական վիճակ մը ստեղծելու: Երեսփոխանաց ժողովն վերջապէս հաւանեցաւ վարչութեան ըրած տրամադրութեան: Իրաց այս վիճակին մէջ կողմակցութեանց մեծ փոփոխութիւններ

եղան, եւ սլաւական երեսփոխանք դաշնակցական ակումբ մը կազմեցին:

Գերմանիոյ մէջ մեծ սաստկութեամբ մղուեցան վնասակարական դաշնակցութեան նկատմամբ պայքարներ, որոնց մէջ պահպանողականք որ վարչութեան նեցուն էին ցայտմ' անոր դէմ քուէ տուին: Բայց դաշնադրութիւնը ընդունուեցան զխաւորաբար կաթուղիկեայ կենդրոնական կողմակցութեան ծայներով, որ անոր համար տէրութեան կողմն ելաւ, վնաս զի իւր առաջարկութիւնն՝ Յիսուսեանց դէմ՝ ի զօրութեան եղող օրէնքը քառնալու ընդունուեցաւ ժողովքէն: — Կը յուսացուի որ նաեւ Ռուսական-գերմանական վաճառականական դաշնադրութիւնն ի գլուխ ելէ:

Իտալիոյ պաշտօնարանի տազնապաժամն շատ երկար տեւեց, եւ ծանարմէլի՝ որ ստանձնած էր նոր մը կազմելու պաշտօնը, յաջողութիւն չունեցաւ: Դրամական վիճակն այնպէս յոռի է (տարեկան իբր 250 միլիոն բաց ունի տէրութիւնը) որ դժուար է ստուգել երկրին զարգացման հոգ տանիլ կարենալ: Վերջապէս Քրիստի՛ այն որ բուն հայրն է այս անել վիճակին՝ կազմեց նոր պաշտօնարանն, որուն իրաւի կեանք եւ ինչ յաջողութիւն ունենալը տարակուսական է:

ՔՐԱԿԱՆԳԱՌԻԹԻՒՆ

ՌԵՍԻԹԵԼԱՅՈՒՆ

- ԳՐԱԿԱՆ — Մար-Աբբաս մշուքնացու գիրքը. 1. — Նորազոյն աղբերք Եզնկայ Գողթացույ. 6: ՊԵՏՄԵԼԱՆ — Հունգարահայոց մայրաքաղաք (Կերլա հայաբաղաճն) ի գիր եւ ի պատկերս. 11: ՀՆԱՅՈՒՄԵԼԱՆ — Թրակացիք եւ Հայք. 15: — Հայկական աշխատութիւնք Փէթթէր հայադիտի. 19: ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Վարդապետութիւն առաքելոց անվանարական կանոնաց մատենար. 21: ԷԶԶՈՒՄԵԼԱՆ — Եռնական փոխառեալ քառեր հայերէնքն մեծ. 26: ԲԱՆԱՏԵՆԳՐԱԿԱՆ — Խանդեղ: — Յիշատակ. 29: ՍԵԼԵԹԵԼԱՆ — ՆորԱշուրիք — Բազմապատկութեան դիւրագիտ փորձ մը. 30: ՄԱՆՐԱՄԱՆԱՆ — Նորածին մանկանց աղումը. 30: ՏԵՆԵԼԱՆ — Ժխել. 31: ՔՐԱԿԱՆԱՆ ՏԵՆԵԼԱՆ ԻՒՆԻՒՆԻՒՆ. 31:

ՀՐԱՍՏԱՐԱՅԻՆ ԵՒ ՊԵՏԱՍՏԱՆԱՅԻՆ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՌԱՓԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆՅԱՆ

ՎԻԵՆԱ. ՄԻԻԲԱՐԵԿԱՆ ՅԳՐԱՆ